

Մոբիլ մանկապարտեզներ Բյուրեղավան խոշորացված համայնքի Ջրաբեր և Նուռնուս գյուղերում 01.11.2018

Բյուրեղավան խոշորացված համայնքի Ջրաբեր վարչական շրջանում, դպրոցին հարող տարածքում լքված շինությունը հիմնանորոգվել է որպես մոբիլ մանկապարտեզ և ծառայելու է համայնքի նախադպրոցական տարիքի 19 երեխաների կրթության գործընթացը կազմակերպելու համար:

Այսօր Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանը ներկա էր հիմնանորոգված ու վերազինված այս շինության բացմանը, որի մի հատվածը կահավորվում է համայնքային ու վարչական շրջանի ղեկավարների նախաձեռնությամբ և օգտագործվելու է Դպրոցական կայուն սննդի ծրագրի իրականացման համար: Զետագայում աշխատանքների վերակազմակերպման արդյունքում նպատակ կա փոքրիկ շինությունն ամբողջությամբ վերազինել՝ որպես համայնքային մանկապարտեզ:

Նույն օրինակով մեկ այլ մոբիլ մանկապարտեզ այսօր բացվել է նաև նույն համայնքի Նուռնուս վարչական շրջանում: Ռոմանոս Պետրոսյանը շնորհավորել է համայնքի բնակիչներին այսպիսի կենտրոն ունենալու առիթով և ասել. «Ձեր ձեռքով ավելորդ հանդիսավորությունից՝ պիտի ասեմ, որ այս ամենը մեզ հետաքրքրում է բացառապես բովանդակային առումով, որովհետև ես կարծում եմ, որ պետությունը տապալվել է այն համայնքներում, որտեղ չկան նման հաստատություններ: Մենք հիմա ստեղծում ենք նախադրյալներ այս իրավիճակը շտկելու համար»:

Բյուրեղավան խոշորացված համայնքի ղեկավար Զակոբ Բալասյանը շնորհավորեց ներկաներին՝ կարևորելով մարզպետարան-համայնք-հասարակական կազմակերպություն համագործակցությունը, որը կարող է հանգեցնել նման արդյունքների: «Սա ուղղակի վերանորոգված շինությունն է, այս ամենի տակ կա գաղափարական հենք, ու դա է գլխավորը», - ասաց Զ.Բալասյանը՝ հավելելով, որ համայնքային իշխանությունները պատրաստակամ են ներդնել նաև սեփական ջանքերն ու միջոցները՝ էլ ավելի մեծ ձեռքբերումներ ունենալու համար:

Ջրաբեր վարչական շրջանի ղեկավար Գևորգ Զայրապետյանն էլ այս մանկապարտեզի առկայությունը կարևորեց որպես համայնքի համար մնայուն արժեք հանդիսացող կառույց: «Մոբիլ մանկապարտեզները՝ որպես Զայաստանի գյուղական համայնքներում նախադպրոցական կրթության խնդրի լուծման նորարարական ձև» ծրագիրն իրականացվում է ԵՄ ֆինանսավորմամբ՝ Կայուն զարգացման նախաձեռնությունների «Աստղացուլք» ԶԿ և «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ԶԿ կոնսորցիումի կողմից:

«Աստղացուլք» ԶԿ նախագահ Իրինա Զովհաննիսյանը մատնանշեց այն հիմնական սկզբունքը, որը վճռորոշ է եղել մոբիլ մանկապարտեզներ հիմնելու որոշումը կայացնելիս. «Երբ մենք խոսում ենք ավելի բանիմաց, կիրթ սերունդ ունենալու մասին, պետք է հիշենք, որ այդ կրթությունն ու դաստիարակությունը սկսվում է նախադպրոցական տարիքից, իսկ երեխան իր արժեքները ձևավորում է 3-5 տարեկան հասակում: Յուրաքանչյուր ծնող բնակության համար ընտրում է այն համայնքը, որտեղ կրթության այս հնարավորություններն առկա են և իրենց երեխաների համար կան զարգացման և սոցիալականացվելու համար անհրաժեշտ պայմաններ»: